*թեան համար։ — Ընենք խորագրիս մէջ խոստացուած հարցմունքնիս ալ։*

1. *Նկատելով՝ որ* Մեծ. Բարգէն *վարդապետ հարկ մը չէր տեսներ* Այտընեանի *յի բացառականին համար տուած մեկնութիւնը՝ իբրեւ այդ խնդրոյն համար վերջին խօսք և իբր վճիռ ընդունելու.*

2. *Նկատելով՝ որ ինքն՝ առանց հակառակելու յի գործածողներուն, իր յիշատակած չ — չը — չի չէ = (ոչ) ձեւերու մէջ՝ կը նախընտրէ չ ձեւը, և ամէն պարագայի մէջ միայն զայն կը գործածէ, վարդապետելով որ վերոյիշեալ ամէն ձեւերն ալ ճիշդ մի և նոյն զօրութիւնն ունին.*

3. *Նկատելով՝ որ Նա այդ իր գործածած չ (չը) բացառականին մէջ ալ (փոխանակ չի ձեւին) կ'ընդունի՝ որ բայ մը (եւկանը) ծածկուած կայ, այնպէս որ չէ՝ ժողովրդեան բերնի մէջ փոխուեր եղեր է չի, ուստի պարզապէս ժխտողական մասնիկ մը չէ.*

*Պիտի հարցընենք. —* Արդեօք *ի՞նչպէս պիտի կարենանք գրութեան մէջ (ընդունելով՝ որ ճշմարտ մէջ դիւրաւ չեշտով կը զանազանին) տարբերել իրարմէ* Սհմ. Նեբկ. Գ. *դէմքը՝* Յստր. Գ. *դէմքէն ։*

— Արդէն *տուր պատասխանը տուած եմ, պիտի ըսէ* Մեծ. Բարգէն *վարդապետ. երն և երն տարբերութիւնը բաւական է ցոյց տալու՝ պահանջուած խտիրը. միայն թէ խնամք ունենալու է՝* Կոստանդնուպօլսեցւոց *պէս՝ և հնչումը և հնչման հետ համազոր չընել, այլ հնչել այնպէս՝ ինչպէս կը հնչեն՝ օրինակ իմն՝* Մշեցիք, *և այլն։*

— Բայց *ներեցէք որ խօսքերնիդ կ'ընդհատենք. որովհետեւ համամիտ ենք ձեզի հետ՝ թէ չսիրեր և չսիրէր իսկապէս երկու տարբեր ձեւեր են, հետեւաբար կրնան տարբերութիւն ցոյց տալ* Սհմ. Նեբկ. Գ. *դէմքին և* Յստր. Գ. *դէմքին մէջ. սակայն խնդիրը միայն եւ վերջացող բայերուն վրայ չէ, այլ նաեւ ալ վերջացողներուն վրայ։* Մենք *ձեր գրութիւններուն մէջ չգտանք թէ այս վերջիններն արդեօք ի՞նչպէս պիտի տարբերին գրութեամբ իրարմէ՝ վերոյիշեալ երկու տարբեր դէմքերուն մէջ։* Օրինակի *համար՝ ի՞նչ զանազանութիւն ձեւի՝ պիտի գտնէք դուք հետեւեալ խօսքերուն և կամ անոնց նմաններուն մէջ, գրելով համաձայն ձեր ուղղագրութեան.*

*Եթէ չգար՝ ըսել է որ կամք չունի գալու.*
*Եթէ չգար՝ պիտի ըսէինք թէ գալու կամք չունէր։*
*Եթէ չտար՝ բանի տալ։*
*Եթէ չտար՝ բանի կը կորգէինք։*

*Զնաւատար մեզի՝ որ կրնանք դէմ դնել։*
*Զնաւատար մեզի՝ ըսելիք չունէինք. և այլն, և այլն։*

Այսպիսի *և նման պարագայից մէջ,* Մեծ. Բարգէն *վարդապետ, ձեւերը նոյն են, հնչումները համազօր, տեղի չունի և և է տառից հնչման և ձեւերու զանազանութիւնը, որուն ապաւինեցաք եւ վերջացած բայերուն մէջ…* Եւ *հետեւաբար դուք ալ անկեղծօրէն մեզի հետ և նաեւ* Հր. էֆ. Ասատուրի *հետ՝ պէտք է «պարզապէս չ ձեւին գործածութենէն փախնալ, որ* Սահմ. Ներկայի *և* Յստր. Անկ. Եզ. Գ. *դէմքերը իրարու հետ շփոթուիլ» կրնան.* (Լոյս. Թ. 50, էջ 1210, Բ սիւնակ)։

Աւելորդ *պիտի ըլլայ աւարկել՝ թէ իմաստին ամբողջութիւնը արդէն ցոյց կու տայ թէ այդ ձեւերէն ո՛րը* Սհմ. *ներկ կը ցուցնէ և ո՛րը* Յստրադասականն։ — Եւ *ինչու զանազանելու գործը դժուարացընել, քանի որ գրեթէ հաւանականութիւն մը գոյացած է արդէն գործնականին մէջ* Սահմ. *ներկը չի—ով* Յստրադասականէն *տարբերելու։*

Բայց *դուք չէք ուզեր տեղի տալ և հետեւիլ* Այտընեանի *և* Ընկ. *կարծեաց և չի գործածել (որուն դէմ կարծեա հակակրութեան պէս բան մը կը ցուցնէք), այլ կը վերադասէք առանց ի տարին ձեւ մը։* Ըսելիք *չունինք. ճաշակի կամ ականջի խնդիր է. միայն թէ կ'առաջարկենք ու կը փափաքինք որ ի սէր քերականական պարզութեան՝* Սահմանական *ներկին մէջ չը գրէիք և* Յստրադասականին *մէջ պարզապէս չ, և մանաւանդ լաւագոյն պիտի ընէք եթէ չը—ին վրան շեշտ մ'ալ դնէիք, և կամ գէթ չ տառը* Սահմանականին *մէջ միշտ մակակէտով մը (չ') նշանակէիք. որով գործնականին մէջ շփոթման վախ տեղի տուած պիտի չըլլար, իսկ տեսականին մէջ ալ բնաւ գայթակղութեան պէս բան մը պատճառած պիտի չըլլար՝ իբրեւ թէ ինքզինքնիդ ներհակելու վտանգի մէջ կը դնէք՝* Այտընեանի *և* Ընկերութեան *կարծիքին կամ վճռին։*

Հ. Ա. ՏԻՐՈՑԵԱՆ

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ


ՏԻՐՈՑԵԱՆ Հ. Ա. — *Աշխատութեան իրաւունքները.* 49


## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ (*Քաղուածք*).


ՍԱՀԱԿԵԱՆ Հ. Կ. Տ. — *Հայազգի անծանօթ մեսրոպեան հեղինակներ* . . . . . . 53
ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — *Քննութիւն մը Շիրակու վրայ.* 56
ԱՍՏՈՒՐԵԱՆ Հ. Ց. — *Եղիշէի Պատմութեան նորագիւտ հատակտորներ* . . . . 59
ՍԱՀԱԿԵԱՆ Հ. Կ. Տ. — *Ազգագրական տեղեկութիւնք Հայոց վրայ օտար պատմչաց քով* . . 64
ՊՈՏՈՒՐԵԱՆ Հ. Մ. — *Միջնադարեան բանաստեղծներ. — Մկրտիչ Նկարագիր կամ Նաղաշ* . 67
ԱՍՏՈՒՐԵԱՆ Հ. Ց. — *Դէպ ի Զմմառ* . . 71
ՏԻՐՈՑԵԱՆ Հ. Ա. — *Ս. Գրոց տարակուսական բառի մը ընթերցումը* . . . . . 74


## ԳՐԱԿԱՆԱԿԱՆՔ


ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈԹԵԱՆՑ. — *Աշոտ Որդորմած՝ Թագաւոր Հայոց* . . . . . . . 75
ՏԻՐՈՑԵԱՆ Հ. Ա. — *Թարգմ.* ՏՈՐԿ. ՏԱՍՍՈՅԻ՝ *Ազատումն Երուսաղէմի դիւցազնական քերթութեան Գ. Երգէն. — Պատրաստութիւն պաշարման Երուսաղեմի և Թաղումն Դուդոնի* . 80
ՏԻԳՐԱՆ ԽԼԹԸՆՃԵԱՆ. — *Թարգմ.* ԱԼՖՐԷՏ ՏԸ ՎԻՆԻԻ՝ *Մովսէս ի Նաբաւ քերթուածին* . . 83
ԳՈՆՏԱՐՃԵԱՆ Հ. Ա. — *Սրով ու Հրով. Թարգմանութիւն պատմական վիպասանութեան* ՀԵՆՐԻԿՈՍ ՍԷՆՔԻԷՎԻՉԻ . . . . . 86


## ՀԱՅ ՀԱՆԴԷՍՆԵՐ


ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — *Հանդէս Ամսօրեայ. — Անահիտ* . . . . . . . 89
ՊՈՏՈՒՐԵԱՆ Հ. Մ. — *Արեւելեան Մամուլ. — Լոյս.* 92
ՏԻՐՈՑԵԱՆ Հ. Ա. — *Երկու խօսք և Հարցմունք մը առ* Մեծ. Բարգէն Վ. *Կիւլէսէրեան* . . 95


digitised by A.R.A.R.@